Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Рай

Х1 – [illegible] – [illegible]
Х2 – [illegible] – [illegible]
Х3. [illegible] [illegible]
Х4 – [illegible] – [illegible]
Х5 – [illegible]
Х6 – [illegible]
Х7 Х [illegible] [illegible]

1 – [illegible]
2 [illegible]
3 – [illegible]
4 [illegible]
5 [illegible]
6 [illegible]
7 [illegible]

622
99
809

Ս. ԱՆ—ՍԿԻԻ

ԳԻՒՂԱՅԻՍԿԱՆ ՀԱՐՑԸ

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

360
ամ.

Թարգմ. ռուսերէնից Հ. Հ.

1906 թ. ԹԻՖԼԻՍ.

2 2 MAR 2013

25577

ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀՆՐՄԷՍ“ Մադաթեան փող. 5.

1906 (216)

ԱՌՕՍԻՆ ՀԱՍԱՐ

314-2010

809

ՀԱՅԿ ԷՆԹԵՐՑԱՐԱՆ
1901
ՎԱՌՆԱ
ԲԱԲԿԻՆ ՍԻՆԻՍԻՆ

ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

I

Ֆրանսիայում, ինչպէս և եւրոպական երկիրներից շատերում, գիւղացիական հարցը ընդհանուր առմամբ նոյնացւում է հողի հարցի հետ—խոշոր ու մանր հողատիրութիւնների միջև եղած պայքարի, հողատիրական արտադրութիւնների կապիտալացման հարցի հետ։

Պարբերական և աւելի ու աւելի յաճախ կերպով գլուխ բարձրացնող գիւղատնտեսական ճգնաժամերը՝ բոլոր իրենց ծանր հետևանքներով հանդերձ՝ հրապարակի վրայ դրին խիստ սուր կերպարանք ընդունած գիւղացիական հարցը այլ և այլ եւրոպական երկիրներում, և մանաւանդ Ֆրանսիայում, որտեղ գիւղական ազգաբնակութիւնը դեռ կազմում է երկրի ընդհանուր բնակչութեան 62 %-ը։

Որպէսզի հնարաւոր լինի որոշ գաղափար կազմել ժամանակակից ֆրանսիական գիւղացիութեան տնտեսական և սոցիալական վիճակի մասին, անհրաժեշտ է թռուցիկ հայեացքով ուշադրութեան առնել այն դրութիւնը, որի մէջ այդ գիւղացիութիւնը գտնւում էր մինչև Մեծ Յեղափոխութիւնը և նրանից յետոյ։

Ֆրանսիայում ճորտութեան իրաւունքը սկսում է աստիճանաբար վերանալ դեռ XV—XVI դարում։ Բայց և այնպէս, չը նայած դրան, Մեծ Յեղափոխութիւնը սկսելիս, դեռ ֆրանսիական գիւղացիութիւնը փաստօրէն և մասամբ էլ իրաւաբանօրէն ստրուկ էր ֆէօդալական սէնեօր—կալւածատէրերի ձեռքին։ Գիւղացիութիւնը ամենաաղքատ, անել և յուսահատ վիճակի մէջ էր. թշւառ, անգիտակից գիւղացիները հասած էին այդ դառն օրին, այդ սպանիչ վիճակին շնորհիւ ծայրահեղ սակաւահողութեան, կալւածատէրերին, հոգևորականութեանն ու թագաւորական իշխանութեանը վճարելի անհամար ու ծանր հարկերի, անտանելի տուրքերի և զանազան վճարումների։ Շնորհիւ այն անխիղճ ու

լիրը թալանների ու շահագործման, որոնց ենթարկվում էր գիւղացիութիւնը չինովնիկների և միջնորդների կողմից, կուլտուրական ասպիճանը չափազանց ցած էր, իսկ գիւղական ազգաբնակութիւնը համարեա բոլորովին անգրագէտ, ընկճած և իրաւազուրկ։

Հողը մշակւում էր պրիմիտիւ և անկատար եղանակով, երկրագործական տէխնիկան աւելի բարձր չէր, քան X դարում, նպաստող, օժանդակ արհեստներ շատ քիչ կային, և այդ թշուառութեան մէջ ստրուկ մասսաների համար օգնութիւն, ելք չը կար և ոչ մի տեղից։ Եւ գիւղացի ազգաբնակութիւնը օրէցօր ուժասպառ էր դառնում, այլասերւում, մորում էր ուժից վեր աշխատանքից, զրկանքներից, պարբերաբար կրկնւող սովից, հիւանդութիւններից և համաճարակներից (դեռ մի կողմը թողած պատերազմները)։

«Ֆրանսիայում, գրում էր 1779 թւականին անգլիացի գօկտոր Մ՝օորը, մայրաքաղաքի ամենածայրահեղ տականքները աւելի լաւ պայմանների մէջ են ապրում, քան աշխատասէր գիւղացիութիւնը... Իւրաքանչիւր երկրում վատ բերքը կամ այլ տարերային դժբախտութիւնները կարող են միայն որոշ ժամանակով առաջ բերել ժողովրդի մէջ կարիք և նոյնիսկ սով։ Բայց երբ մի այնպիսի երկրում, որպիսին է Ֆրանսիան, գիւղացի ազգաբնակութեան անել և ծայր աղքատութիւնը անընդհատ շարունակւում է մի քանի թագաւորութիւնների ընթացքում, այդ հանգամանքը կարող է ծառայել իբրև կառավարութեան անհոգութեան անվիճելի ապացոյց,—կառավարութեան, որը այդպիսով արդէն դառնում է ժողովրդի կեղեքիչ»։ *)

XVIII դարի Ֆրանսիական գիւղացիութեան մասին առատ վկայութիւններ կարելի է գտնել Իւնգի (Յեղափոխութեան նախօրեակին Ֆրանսիայում ճանապարհորդած անգլիացի) և այդ դարաշրջանի ուրիշ հեղինակների գրուածքների մէջ։

Գիւղացիական հարցը լուծելու համար XVIII դարի վերջին հրապարակի վրայ էին դրուած երկու որոշ նպատակ. 1) գիւղացիների ազատագրութիւնը ֆէօդալական ճորտութիւնից և անթիւ հարկերի ու վճարումների լծից և 2) նրանց ապահովումը հէնց նոյն ազնուականութեան կամ հասարակական մի այլ դասակարգի

*) A. View of societu and Manners in France, Swiserland etc.

նոր ստրկացումից,—ապահովում, որը պիտի կատարւէր ֆէօդալական հողը գիւղացիների մէջ հաւասարապէս բաժանման միջոցով։

Ինչ վերաբերում է առաջին խնդրին, դա ստացաւ իր վճռական և արմատական լուծումը։

Դեռ 1789 թւականի յունիսի 23-ին միայն՝ Լիւդովիկ XVI-ը հանդիսաւոր կերպով պարտաւորւեց «պահպանել անձեռնմխելիօրէն ֆէօդալական իրաւունքները», և ահա միայն մէկ ու կէս ամիս անցած՝ արդէն յայտարարւեց հռչակաւոր «Օգոստոսի 4-ի դէկրէտը», որը իր առաջին իսկ յօդւածով օրինագրում էր. «Ազգային Ժողովը *) ամբողջովին վերացնում է ֆէօդալական կազմը»։

Այդ վերացումը վերջնականապէս գլուխ բերեց Կոնվէնտի **) դէկրէտով 1793 թւականի յուլիսի 17-ին, որն՝ առանց որևէ վարձատրութեան ոչնչացրեց ֆէօդալական բոլոր իրաւունքները, հրամայելով այրել եղած՝ բոլոր պարտամուրհակները։

Միանգամայն այլ կերպ վերաբերւեց Ազգային Ժողովը դէպի երկրորդ խնդիրը, որ ասպարէզ էր հանել հէնց ինքը գիւղացիութիւնը։ Բուրժուազիան պարզ հասկանում էր իր շահերը, ուստի համարեա տրամադիր չէր գիւղացիութեան պահանջներին լիակատար բաւարարութիւն տալ։ Վերացնելով ֆէօդալական կարգերը, բուրժուազիան ընաւ չէր ձգտում այն նպատակին, որպէսզի աշխատաւոր դասակարգերը ապահովւած լինեն նոր ըստրկացման հնարաւորութիւնից։ Սակայն հէնց նոյն իրենք դէպքերը հարկադրեցին բուրժուազիային այդ ուղղութեամբ էլ մի քայլ անել։ Եւ այդ քայլը՝ չը նայած իր անբաւարար լինելուն, չը նայած այլ և այլ սահմանափակումների, կը մնայ որպէս ֆրանսիական կառավարութեան ամենավճռական ակտերից մէկը—գիւղացիութեան խնդիրը լուծելու գործում։

Յեղափոխական մրրիկը, որ սկսւեց գիւղացիական ապստամբութիւններով, առաջ բերեց ազնուականների ընդհանուր փախուստ (էմիգրացիա) դէպի արտասահման։ Հարիւրաւոր, հազարաւոր ազնուականներ թողնում էին իրենց կալւածներն ու հողերը,

1) Ֆրանսիական ժողովրդական ներկայացուցիչների առաջին ժողովը, որը փոխարինեց Գեներալ-Շտատներին (1789 թւի յունիսի 17-ին)։

2) Ժողովրդական ներկայացուցիչների ժողովը, որը Ֆրանսիայում հասարակապետութիւն յայտարարեց (1792 թւականի սեպտեմբերի 21-ին)։

իրենց ամրոցներն ու մայրաքաղաքում եղած ապստամբները և փախչում էին Բելգիա, Աւստրիա, Գերմանիա, որտեղ խիստ ագիտացիա էին մղում Ֆրանսիայի յեղափոխական կառավարութեան դէմ և, մտնելով թշնամական բանակի շարքերը, պատերազմում էին Ֆրանսիայի դէմ։

Եւ ահա Ազգային Ժողովը 1792 թ. ապրիլի 14-ի դեկրետով որոշեց յարքունիս գրաւել փախստական էմիգրանտների բոլոր հողերը. իսկ ուղիղ չորս ամիս յետոյ, օգոստոսի 14-ի դեկրէտով որոշեց բոլոր այդ հողերը ի վաճառ հանել։ Այդ վերջին հրամանագրի մէջ ասւած էր.—«մանր սեփականատէրերի թիւը մեծացնելու նպատակով».....«առաջ էմիգրանտներին պատկանող հողերը, մարգագետինները և այգիները բաժանել փոքր մասերի, որոնցից իւրաքանչիւրը լինի 2-3 դեսեատին և հանել ի վաճառ»։

Այս ակտով ազգային ժողովը յոյս ունէր հասնել երկու նպատակի. նախ գիւղացիութեանը իր կողմը գրաւել և միևնոյն ժամանակ ձեռք բերել դրամական միջոցներ, որ անհրաժեշտ էին երկրի ներքին և արտաքին թշնամիների հետ պատերազմելու համար։

Սակայն այդ երկու նպատակին էլ նա կարողացաւ հասնել միայն կիսով չափ։ Գիւղացիութիւնը, որ յոյս ունէր, թէ էմիգրանտների հողերը կը բաժանուեն առանց վարձատրութեան, բաւական չը մնաց այդ կիսամիջոցից։ Վաճառումը շատ դանդաղ էր առաջ գնում, թէև հողերը շատ աժան էին գնահատւած։ Բացի այն, որ գիւղացիների մեծամասնութիւնը, մանաւանդ սակաւահող գիւղացիք միանգամայն զուրկ էին հողեր գնելու համար անհրաժեշտ միջոցներից, շատ շատերն էլ չէին վստահանում ըիսկ անել ու կորցնել իրենց փողերը, որովհետև կամ վախենում էին, թէ հողը մի գուցէ նորից գրաւեն նախկին տէրերը (գաղթած կալւածատէրերը), կամ յոյս ունէին, որ այդ հողը կանցնի իրենց առանց վարձատրութեան։ Եւ 4—5 տարւայ ընթացքում վաճառւած էր ընդամենը 452,000 հողամաս, որոնք յետագայում, Ռէստաւրացիայի ժամանակ, գնահատւեցին մէկ միլիարդ 297 միլիոն ֆրանկ, իսկ այդ կազմում էր կալւածատիրական բոլոր հողերի արժէքի գրեթէ միայն մէկ տասներորդը։ Եւ ինչ. այդ 452,000 հողաբաժինների մեծագոյնմասը ընկաւ ոչ թէ գիւղացիութեան, այլ վաշխառուների, կեղեքիչների ձեռքը, որոնք աննշան գներով

գնում էին հարիւրաւոր հողամասեր և ապա եռակի թանկ ծախում գիւղացիութեանը, կամ դարձնում իրենց համար կալւածներ։

Եթէ էմիգրանտ-կալւածատէրերին պատկանող հողերի վաճառումը մի փոքր երկար տեւէր, գիւղացիները, հաւանական է, կամաց-կամաց ձեռք կը բերէին այդ հողերը եթէ ոչ ամբողջովին, գոնէ մեծամասնաբար, և այն ժամանակ այդ ակտը կարող էր հսկայ ազդեցութիւն ունենալ ֆրանսիական գիւղացիութեան ապագայ ճակատագրի վրայ։ Սակայն առաջին իսկ քայլը դէպի հակայեղափոխութիւնը, դէպի հին կարգերին վերադառնալը պատճառ եղաւ հողերը վաճառելու դադարեցման, իսկ յետոյ կառավարութիւնները 30 տարւայ ընթացքում՝ նախ կայսրութիւնը, ապա և Ռէստաւրացիան, գործ դրին ամեն ջանք՝ ոչնչացնելու—ոչ միայն դեկրէտը, այլ և նրա բոլոր հետևանքները, և վերադարձնելու հողատիրութիւնն այն դրութեանը, որում նա գտնւում էր յեղափոխութիւնից առաջ։

Էմիգրանտ-կալւածատիրական հողերի վաճառումը դադարեց Դիրեկտորիայի ժամանակ, բայց 1792 թւականի ապրիլի 14-ի դեկրէտին ամենամեծական հարւածը հասցրեց Նապոլէոնը Կոնսուլատի ժամանակ։ Նախապատրաստելով յեղաշրջումը և զգալով, որ երբ ինքը կայսր դառնայ, անհրաժեշտ կը լինի ունենալ իր շուրջը սերտ կապւած մի կաստա, որի դերը կարող էր կատարել միայն հին ազնւականութիւնը, Նապոլէոնը սկսեց ներումներ տալ (ամնիստիա) ազնւականներին և վերադարձնել նրանց իրենցից յարքունիս գրաւած հողերը։

Այն, ինչ սկսեց Նապոլէոնը, վերջացրեց Ռէստաւրացիան։ Հաղիւ գահը բարձրացաւ Լիւդովիկ XVIII-ը, և ահա էմիգրանտներին (1814 թ-ին) վերադարձուեցին նրանց բոլոր այն հողերը, որոնք դեռ չէին ծախւած։ Տաս տարի յետոյ Լիւդովիկի նախորդ Կարլ X-ը հրատարակեց հէնց նոյն իրենց վերադարձած էմիգրանտների հաստատած օրէնքը, որով տարեկան 30 միլիոն բենտ էր նշանակւում մէկ միլիարդ կապիտալի համար, որը պիտի տրւէր էմիգրանտներին, իբրև վարձատրութիւն նրանց վաճառւած հողերի փոխարէն։ Այդ բէնտը (մինչև 1829 թ. 30 միլիոն էր, իսկ յետոյ տարեկան 26 միլիոն), որ ֆրանսիական երկիրը վաճ-

ռում է մինչև այսօր իսկ, այժմ կազմում է 2 միլլիարդի հասնող մի խոշոր գումար։

Ահա այդ էր հողային խնդրի լուծման նկատմամբ կատարուած միայն մի հատիկ արմատական ակտի ճակատագիրը։ Այդ փորձը, որ նստեց ժողովրդին երկու միլլիարդ (չը հաշուած այն գումարը, որ վճարուած էր հողի համար), վերջիվերջոյ այն հետեւանքն ունեցաւ, որ հողային մանր սեփականատէրերի թիւը հազիւ մի քառորդ միլլիոնով աւելացաւ։

Դրանից յետոյ, XIX-րդ փոթորկալի դարի ամբողջ ընթացքում էլ ոչ մի փոքր ի շատէ լուրջ փորձ չէ արւել գիւղացիական հողային յարաբերութիւնները կարգաւորելու և լքեալ գիւղացիական մասսաները խոշոր հողատէրերի իշխանութեան տակից ազատելու համար։ Եւ XX-րդ դարի սկզբին մենք տեսնում ենք հողային նոյն պատկերը իր բոլոր անմիջական հետեւանքներով հանդերձ, որպիսին ներկայացնում էր մեզ նախայեղափոխական Ֆրանսիան։

II.

Ֆրանսիայի ազգաբնակութիւնը XVIII դարի վերջին (1790 թուին) հաւասար էր 26,500,000-ի. քաղաքների բնակչութիւնը կազմում էր այդ թուի միայն մի տասներորդը։ Մնացեալ 24 միլլիոն գիւղական ազգաբնակութիւնից, որը կազմում էր մօտաւորապէս 7 միլլիոնի չափ երկրագործական տնտեսութիւն մի-մի բանւորով, մօտ 3 միլլիոն մարդ հողային սեփականութեան տէր էին։ Ինչպէս վկայում են բոլոր հետազօտողները, այն ժամանակ գիւղացիական հողային սեփականութիւնը չափազանց մանր էր, բաժան-բաժան եղած և ընդհանրապէս բռնում էր Ֆրանսիայի երկրագործական տարածութեան մի երրորդից էլ պակաս մասը։ Հողերի մնացեալ երկու երրորդ մասը, որ գլխաւորապէս պատկանում էր ազնուականութեանը, մշակւում էր մեծ մասամբ կիսաբարականների ձեռքով (այսինքն այն կապալառուների, որոնք բերքի կէսը տալիս են հողատիրոջը)։ Կիսաբարականութիւնը տարածւած էր Ֆրանսիայի ամբողջ եօթ ուղղերորդական մասում, և միայն տեղ-տեղ գործադրւում էր հողի դրամական կապալը (ֆէրմէրութիւն)։ Արդէն այն ժամանակ իսկ բաւական շատ հողաւրկ գիւղացիներ կային, որոնք վարձով էին աշխատում։

Այդպէս էր ահա ընդհանուր առմամբ Ֆրանսիայում տիրող հողային յարաբերութիւնների պատկերը մինչև 1789 թուականը։

Այժմ տեսնենք, թէ ինչ է ներկայացնում այդ տեսակէտից ժամանակակից Ֆրանսիան։

Վերջին վիճակագրական տեղեկութիւնների համաձայն, Ֆրանսիայի ազգաբնակութիւնը 1896 թուականին հաւասար էր 38 1/2 միլլիոնի։ Գիւղական ազգաբնակութիւն կազմում էր արդէն ոչ ինն տասներորդական մասը, այլ ընդհանուր ազգաբնակութեան միայն վեց տասներորդականը, բայց այդ կազմում է հէնց նոյն թիւը. որ մենք տեսանք մինչ-յեղափոխական շրջանում. այսինքն 24 միլլիոն գիւղական բնակիչ, որոնցից ակտիւ աշխատաւոր են (չը հաշուած կանանց, երեխաներին և ծերերին) 6 1/2 միլլիոն հոգի։

1892 թուականի վիճակագրութեամբ՝ այդ ակտիւ բանւորական ազգաբնակութիւնը հողատիրութեան տեսակէտից բաժանւած էր հետեւեալ կերպով.

1) Այն անձինք, որ հողատէր են և աշխատում են իրենց հողի վրայ անձամբ կամ կառավարիչների միջոցով	2.199,220,	կամ 33%
2) Անձինք, որ թէև հողատէր են, բայց հարկադրւած են աշխատելու նաև ուրիշի հողի վրա, որպէս ֆէրմէրներ, կիսաբարականներ կամ բանւորներ	1.188,025	» 17,30%
3) Հողաւրկ, ուրիշի հողի վրայ աշխատող ֆէրմէրներ, կիսաբարականներ, ծառայողներ, բանւորներ կամ ծառաներ .	3.275,890	» 49,20%
Ընդամենը	6.663,135	կամ 100%

Այս աղիւսակից երևում է, որ Ֆրանսիայի երկրագործ ազգաբնակութեան հաւասարեա կէսը զուրկ է որևէ հողաբաժնից, իսկ միւս կէսի մէկ երրորդ մասից աւելին էլ կազմում է սակաւահող գիւղացիութիւնը, որը ոչ մի հնարաւորութիւն չունի ապրելու իրեն պատկանող հողի վրայ, առանց կողմնակի աշխատանքի։ Այդպիսով, երկրագործ ժողովրդից միայն երրորդ մասն է, որ ունի բաւարար քանակութեամբ հող, և այդ թուումն են նաև խոշոր և միջակ հողատէրերը։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս է բաժանւած հողը՝ երկրագործ ժողովրդի կէսը կազմող 3,387,245 հողատէրերի միջև։

1892 թւականին մշակւող երկրագործական տարածութիւնը Ֆրանսիայում հաւասար էր 49,378,813 հէկտարի (հէկտարը հաւասար է $^{9}/_{10}$ դէսեատինի)։ Այդ տարածութիւնը բաժանւած է 5,702,752 տնտեսական հողաբաժինների (տնտեսական հողաբաժինների թիւը անհամեմատ աւելի մեծ է, քան հողատէրերի թիւը, որովհետև հողատէրերից ոմանք իրենց տիրապետութեան տակ ունեն երկու և աւելի հողաբաժին)։ Այդ հողաբաժինները՝ ըստ իրենց մեծութեան՝ բաժանւած էին հետևեալ կերպով։

Հողաբաժնի չափը։	Քանի այդպիսի հողաբաժին կայ։	Ընդամենը այդ հողաբաժինները քանի հէկտարից են բաղկացած։	Հողային ամբողջ տարածութեան տոկոսը (%)։
Մէկ հէկտարից քիչ	1,235,405	1,327,239	2,6/8%
1-ից մինչև 5 հէկտար . .	2,829,259	5,489,250	11,22%
5-ից մինչև 10	788,299	5,755,500	11,65%
10-ից մինչև 40	711,118	14,313,417	28,98%
40-ից և աւելի հէկտար . . .	138,671	22,493,393	45,47%

Այս թւերը պերճախօս կերպով պատկերացնում են, թէ որպիսի յարաբերութիւններ գոյութիւն ունեն մանր և խոշոր հողատիրութիւնների միջև։ Մինչդեռ ամբողջ 4 միլլիօն մանր գիւղացիական տնտեսութիւնները (մինչև 5 հէկտար) բռնում են երկրագործական տարածութեան մէկ վեցերորդ մասից էլ քիչ, մօտ 800 հազար աւելի խոշոր գիւղացիական տնտեսութիւնները (5 հէկտարից մինչև 10 հէկտար) բռնում են մէկ իններորդ մասը (իսկ միասին՝ հողային տարածութեան քառորդը), միջակ և խոշոր կալւածատիրական տնտեսութիւնները, որոնք միայն մօտ 850 հազարի են հասնում, կազմում են հողային տարածութեան երեք քառորդը։ Եթէ նոյնիսկ ընդունենք, որ 10-ից մինչև 40 հէկտար հողից բաղկացած տնտեսութիւնների մի որոշ մասը գտնւում է ունևոր գիւղացիների ձեռքին, այդ դէպքում էլ գիւղացիական հողատիրութիւնը հազիւ թէ կազմի աւելի մեծ հողային տարածութիւն, քան XVIII-րդ դարի վերջում։

Հողատէր և երկրագործ ազգաբնակութեան ընաւորութիւնը XIX-րդ դարի ընթացքում խիստ փոփոխութիւններ կրեց։ Միջակ և խոշոր հողային տիրապետութիւնների մեծագոյն մասն անցաւ բուրժուազիայի ձեռքը։ Կիսարարականների փոխարէն, որոնց թիւը իջաւ բանւոր երկրագործական ազգաբնակութեան 7,18%-ին, ասպարէզ եկան մի կողմից ֆէրմէրները և միւս կողմից՝ բատրակ-պրոլէտարները։ Սակայն այդ հանգամանքը խոշոր հողատէրերի և գիւղացիութեան միջև եղած փոխադարձ յարաբերութիւնները շատ քիչ փոխեց, և շատ կողմերից այդ յարաբերութիւնները մնացին այնպէս, ինչպէս Մեծ Յեղափոխութիւնից առաջ էին։

Եւ այժմ էլ, ինչպէս և XVIII-րդ դարում, խոշոր հողատէրը իր շրջանում փաստօրէն երևան է գալիս իբրև անսահմանափակ իշխող, որին հպատակ են և՛ տեղական վարչութիւնը, և ինտելիգէնցիան, և հոգևորականութիւնը,—և նա օգտւելով այն հանգամանքից, որ գիւղացիները տնտեսապէս կախւած են իրենից, տիրաբար թելադրում է նրանց իր կամքը, թելադրում է նրանց իր կրօնական և քաղաքական համոզմունքները, ստիպում է նրանց ընտրել պատգամաւորական պալատի և ընդհանուր խորհրդարանների համար եթէ ոչ իրեն, գոնէ իր թեկնածուներին։

Մի բացատրութիւն սակայն։ Վերոյիշեալով մենք ամենևին ի նկատի չենք ունեցել ասելու, որ XIX-րդ դարի վերջերի ֆըրանսիական գիւղացին մնացել է նոյնը, ինչ որ XIII դարի վերջում էր։ Ընդհակառակը. ինչ վերաբերում է կուլտուրական և մտաւոր զարգացման աստիճանին, այդ կողմից գիւղացիութիւնը XIX դարի ամբողջ ընթացքում ահագին առաջադիմութիւն է արել և եթէ նախայեղափոխական շրջանի քաղցած, անկիրթ, ծեծւած, ճնշւած և իրաւազուրկ գիւղացուն հնարաւոր լինէր ցոյց տալ ժամանակակից գրագէտ, քաղաքակրթութեան շատ բարիքներ (մինչև լրագիրն իսկ) վայելող գիւղացուն, որ չը գիտէ ոչ սով, ոչ նախկին թալանը և բացարձակ բռնութիւնները, առաջինը հաւանօրէն չէր համարձակւի վերջինին (ժամանակակից գիւղացուն) իր յետնորդը համարել։ Բայց և այնպէս, գիւղի չարքաշ—աշխատաւոր ժողովրդի և խոշոր հողատէրերի միջև գոյութիւն ունեցող փոխադարձ յարաբերութիւնները (որոնք առաջ են գալիս այն բանից, որ գիւղի աշխատաւոր մասսաները տնտե-

ապէս կախուած են խոշոր հողատէրերից) մինչև օրս դեռ պահպանել են ֆէոդալական կազմի շատ գծերը։

Հապա ինչո՞ւմն են կայանում պատճառները, և որո՞նք կարող են լինել հետևանքներն այն բանի, որ մանր գիւղացիական հողատիրութիւնը համարեա մի ամբողջ դարի ընթացքում մնացել է նոյն դրութեան մէջ, պահպանելով իր ձևերը, իր չափերը և իր յարաբերութիւնը դէպի խոշոր հողատիրութիւնը։

Արդեօք այդ կայուն վիճակը ապացոյց է գիւղացիների անշարժութեան և անկարողութեան, թէ՞, ընդհակառակը, այդ վկայում է մանր հողատիրութեան ոյժն ու կենսունակութիւնը։ Արդեօք պիտի մեղադրել ֆրանսիական գիւղացիութեանը այն բանի համար, որ մի ամբողջ դարի ընթացքում նա չէ կարողացել ձեռք բերել իր համար որոշ տնտեսական դիրք, չէ կարողացել տիրանալ հողի և այդպիսով ազատուել խոշոր հողատիրութեան իշխանութիւնից. թէ՞ ընդհակառակը, հարկաւոր է արժանիք և ծառայութիւն համարել այն, որ ֆրանսիական գիւղացիութիւնը պահել է գոնէ հողային այն սեփականութիւնը, որ նա ունէր մինչև Մեծ Յեղափոխութիւնը, և որ թոյլ չէ ուել զրկել իրեն հողից ու դարձնել հողազուրկ պրօլէտարիատ։

III

Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը գիւղացիներին հող չը բաշխեց, նրանց վերստին ստրկացման գիրկը նետելու հնարաւորութիւնից չ՚ազատուեց, բայց և այնպէս նրա (Յեղափոխութեան) կատարած անգին ծառայութիւնը այն բանումն է կայանում, որ նա բռնի կերպով հողազուրկ չ՚արեց գիւղացիութեանը, ինչպէս որ այդ տեղի ունեցաւ Անգլիայում և Պրուսսիայում. որ ոտն ու ձեռքը կաշկանդած գիւղացուն չը նետեց տնտեսական նոր յարաբերութիւնների յորձանքի մէջ, նրան գլխովին չը մատնեց յաղթական կապիտալիզմին։ Թողնելով հողային սեփականութիւն ունեցող գիւղացիութեան մի համեմատաբար խոշոր կորիզ, յեղափոխութիւնը գոնէ ընդառաջ չ՚ելաւ կապիտալիզմին պատրաստի պրօլէտարիատով և հնարաւորութիւն տուեց գիւղացիութեանը՝ սեփական ուժերով կռիւ մղելու իր գէթ ժամանակի տնտեսական անկախութեան համար։

XIX դարու սկզբից ֆրանսիական գիւղացիութեան դէմ մէկը

միւսի յետևից դուրս եկան ահաւոր ոյժեր, որոնք ձգտում էին ոչնչացնել նրա ինքնուրոյնութիւնը, հողազուրկ անել և ստրկացման անդունդը նետել նրան։ Եւ ի՞նչ էր կատարում երեսուն երկար ու ձիգ տարիների ընթացքում ահեղաբար ու սիստէմատիկ կերպով գործող հակայեղափոխութիւնը (ռէակցիա), եթէ ոչ միայն աստիճանօրէն կենդանացնում էր ֆէոդալական հին կարգերը, գիւղացիութեան դէմ էր մղում նրա հին ոխերիմ թշնամուն, այն է՝ ագահ, անողոք և կատաղած հողատիրական արիստօկրատիան, որը նորէն ձեռք բերելով իր հողերը, իր իշխանութեամբ և արտօնութիւններով ոչ միայն չը վերականգնեց, այլ և սկսեց հողազուրկ անել գիւղացիութեանը։

Երեսուն թուականի յուլիսեան յեղափոխութեան որոտները աւետեցին ֆրանսիական աշխարհին ոչ այնքան գիւղացիների ազատումը վերականգնած ֆեոդալակցութեան ճիրաններից, որքան մի նոր իշխանաւորի, մի առաւել հզօր, անողորմ ոյժի հրապարակ ելնելը, որն աւելի անողոք էր, քան ինքը տոհմային ազնուականութիւնը։

Այդ նորածին ոյժը՝ դրամական ազնուականութիւնը, այլապէս ասած՝ բուրժուազիան էր։ Իր ձեռքն առնելով քաղաքական իշխանութիւնը, նա դուրս եկաւ ժողովրդի դէմ նոր զէնքով։ Եթէ հին ազնուականութիւնը հարուածում էր գիւղը մահակով, այժմ բուրժուազիան սկսեց հարուածել այդ նոյն գիւղը դրամի միջոցով։

XIX դարի սկզբից Ֆրանսիան սկսում է աստիճանաբար անցնել կապիտալիստական տնտեսութեան, այսինքն հասարակական կեանքի մի այնպիսի կազմի, որի ժամանակ գործածու առարկաների մեծագոյն մասը արտադրւում է մեքենաների միջոցով, խոշոր չափով՝ նաև վարձու աշխատանքով, և արտադրւում է ոչ թէ արտադրողների գործածութեան համար, այլ վաճառելու նպատակով։

Շատ առարկաներ, որ մինչ այդ տնայնագործական էին, այսինքն շինւում էին տանը ձեռքով, այժմ սկսեցին արտադրել մեքենաների միջոցով գործարաններում։ Հաղորդակցութեան ճանապարհների կատարելագործումը սաստիկ լայն ծաւալ տուեց միջազգային առևտրին և առաջ բերեց կարիք՝ ապրանքները մեծ քանակութեամբ արտադրելու։ Եւրօպական այլ և այլ ժողովուրդների միջև սկսեց մրցում, և իւրաքանչիւրը նրանցից աշխատում էր արտադրելու իր ապրանքները որքան կարելի է աժան, որ-

պէսզի կարողանայ միւս ժողովրդից խլել նրա մուշտարիներին։

XIX դարի կէսից ֆրանսիական կապիտալիզմը սկսեց փորել մանր հողատիրութեան հիմքը և այդպիսով չարքաշ գիւղացիութեան ոտքի տակից դուրս քաշել նրա մի թիզ հողը, նրա վերջին յենակետը։

Գործարանական արտադրութեան օրաւուր առաջընթաց զարգացման հետ միասին՝ գիւղացիների համար որպէս դրամական եկամուտի աղբիւր ծառայող անայնագործ փեշակները գիւղից իսպառ անհետացան, և դրա հետ միասին անչափ մեծացաւ փողի պահանջը գիւղացիութեան համար, որովհետև մեծացել էին հարկերը, ծնունդ էին առել բազմաթիւ նոր պահանջներ, որոնք առաջ անծանօթ էին գիւղացիներին, կամ եթէ ծանօթ էլ էին, գիւղացիները բաւարարում էին այդ իրենց սեփական տնային արտադրութեամբ։

Սակայն այդքանով դեռ չը սահմանափակւեց կապիտալիզմի ազդեցութիւնը գիւղի վրայ։ Կապիտալիզմը խոշոր մեքենայական արտադրութիւնը մոցրեց նաև երկրագործական ասպարէզում (ի հարկէ, կալւածներում)։ Այդ հանգամանքի շնորհիւ երկրագործական արդիւնքների արտադրութիւնը չափազանց մեծացաւ և ժանացաւ։ Ու XIX դարի կէսից հացի գները սկսեցին սիստէմատիկաբար ընկնել. դրա պատճառը նաև այն էր, որ հաղորդակցութեան ճանապարհների զարգացումը հնարաւոր դարձրեց հաց ներմուծելը այնպիսի երկիրներից, ինչպէս Ամերիկա, Հնդկաստան, որտեղ հացի արտադրութիւնը առասպելաբար ժան է։

Այսպիսով կապիտալիզմը, որը զրկեց գիւղացիութեանը բնական տնտեսութեամբ ապրելու հնարաւորութիւնից (այսինքն՝ երբ ամէն ոք պատրաստում է այն ամենը, ինչ հարկաւոր է իր սեփական գործածութեան համար), նախ առաջ բերեց օրէցօր աւելի և աւելի մեծացող փողի պահանջը. բացի դրանից, խլեց գիւղացիների տեղական տնայնագործական աշխատանքի եկամուտը և, վերջապէս, իջեցրեց երկրագործական արտադրութեան գինը։

Որպէսզի կարելի լինէր դուրս գալ այս անտանելի դրութիւնից, գիւղացուն „մնում էր միայն մի միջոց՝ մեծացնել արտադրութեան ծաւալը։ Սակայն ինչպէ՞ս մեծացնել։ Լայնացնել վարունցանքի սահմանները չէր կարելի, որովհետև հող չը կար, իսկ հողի արդիւնաբերականութիւնն աւելացնելու և աւելի կատարելագործուած տնտեսութեան անցնելու համար հարկաւոր է հողի արհեստական պարարտացում, անհրաժեշտ են մեքենաներ, աւելի լաւ լծկան անասուններ, կարճ՝ հարկաւոր են կապիտալներ, որոնցից գիւղացիութիւնը զուրկ էր։ Եւ վերջապէս, ինչ բարելաւումներ են հնարաւոր մի թիզ հողի վրայ...

Այդպիսով, կապիտալիզմի զարգացմամբ սեփականատէր գիւղացու դրութիւնը օրէցօր վատանում, աւելի ու աւելի ծանր, դժուարին էր դառնում, և սկսում էր թուալ ոչ միայն բուրժուազիայի հաւատարիմ ծառաներին, այլ և ժողովրդի իսկական բարեկամներից շատերին, որ այդ դրութիւնն անել և յուսահատ է։ Եւ նրանք, ժողովրդի այդ անկեղծ, բայց անհեռատես բարեկամները, էլ ոչինչ չը գտան անելու և ասելու, բայց եթէ խոնարհութեամբ ենթարկւելու «պատմութեան անխուսափելի օրէնքին»։

Մօտաւորապէս ութ տարի սրանից առաջ ֆրանսիական բանւորական կուսակցութեան պարագլուխներից մէկը, ժան-ժորէսը, պատգամաւորական պալատի առաջ այսպէս նկարագրեց ֆրանսիական գիւղացիութեան դրութիւնը. «Երկրագործական արտադրութիւնը—ասում էր նա—ներկայումս գտնւում է օրհասական վիճակի մէջ։ Նա (արտադրութիւնը) եթէ ուզում է կուել համաշխարհայի մրցման և գների անկման դէմ, հարկադրւած է, լայնօրէն բացել իր դռները շարժական կապիտալի առաջ, իրեն օգնելու կոչել նրան։ Բայց եթէ երկրագործութիւնը օգնութեան կանչէ այդ կապիտալները, եթէ նա դիմէ փոխառութիւնների, եթէ արտադրողը հողի պարարտացում ու լաւ խաղողի որթեր ձեռք բերելու համար և վարը խորացնելու ու կատարելագործւած արտադրութիւն առաջ բերելու նպատակով ստիպւած լինի դիմել նոյն այդ կապիտալին, այն ժամանակ այդ ամենը հաւանօրէն շատ շուտով հողային սեփականութիւնը, մասնաւորապէս՝ գիւղացիական հողային սեփականութիւնը կը դցի շարժական կապիտալի լիակատար իշխանութեան ներքոյ։

«Այսպէս ուրեմն, պարոններ, խնդիրը երկրագործական արտադրութեան վերաբերմամբ դրւած է մի չափազանց սպառնական ձևով. կամ այդ արտադրութիւնը չի դիմիլ կապիտալի ոյժին, ֆինանսների օգնութեանը, և դրանց բացակայութեան, ուժեղ և արագ առաջադիմութեան (որը հնարաւոր է միայն կապիտալի օգնութեամբ) բացակայութեան պատճառով

կանգ կառնի ու կը ոչնչանայ հաժաշխարային մրցման հետ, վարհող կուում կամ նա (արտադրութիւնը) օգնութեան կը կանչէ կապիտալներ և փրկւած կը լինի նրանց միջոցով, փրկւած, բայց... և կուլ գնացած։ Եւ այսօր հողային սեփականութիւնը, գիւղացիական հողատիրութիւնը անհետանալու, երկու ճանապարհներից մէկն ունի ընտրելու. նա կ'անհետանայ կամ քարուքանդ լինելուց, կամ ֆինանսների և շարժական կապիտալի շնորհիւ»։

Բայց եթէ ամենքը, ժողովրդի և բարեկամները, և թշնամիք, անցեալի և ապագայի մարդիկ, ոչ մի ուրիշ ելք չը գտնելով, խոնարհուեցին կապիտալիզմի ամենայաղթ ոյժի առաջ,— միայն մէկը եղաւ, որ չը յաղթուեց, գլուխ չը թեքեց հզօր կապիտալիզմի առաջ և այդ մէկը հէնց ինքը գիւղացին է։

Խեղճ, անպաշտպան, չունենալով ոչ կուի միջոց, ոչ էլ գիտութեան ու տեխնիկայի ոյժից օգտուելու հնարաւորութիւն, նա, այդ չարատանջ գիւղացին, կռիւ մտաւ կապիտալիզմի հետ մերկ ու անզէն, մտաւ, յենւելով միայն իր աշխատանքի, իր գիւղացիական տոկունութեան ու դիմացկոտութեան վրայ, առաջնորդւելով միայն իր սեփական մտքերով, սեփական նկատումներով։ Եւ եթէ ամբողջ կէս դար շարունակւող անխնայ և յուսահատ կուում նա դեռ յաղթող չը հանդիսացաւ, բայց և չը յաղթւեց էլ կապիտալիզմից։ Իսկ այդ վերջին հանգամանքը հէնց ինքն ըստ ինքեան մի խոշոր յաղթութիւն կարող է համարւել։

IV

Ֆրանսիացի հեղինակները շատ յաճախ են կանգ առել Ֆրանսիական գիւղացիութիւնը բնորոշելու վրայ։ Այդ բնորոշումները նկարագրում են ժամանակակից գիւղացու տիպը շատ մռայլ գոյներով։ Համաձայն դրանց, գիւղացին ինդիվիդուալիստ է (անհատական), քարասիրտ, ժլատ, կասկածոտ և եսասէր մինչև ուղն ու ծուծը։ Միակ զգացումը, որ մատչելի է նրան, որ ամբողջովին համակում է նրան,—այդ նրա սէրն է դէպի իր սեփականութիւնը, և ձգտումը՝ մեծացնել այդ սեփականութիւնը։

Եւ բոլոր այն զգացումները, որոնցով յուզւում ու շնչում է այդ գիւղացու էութիւնը, կենտրօնացած են միայն իր մի կտոր

հողի վրայ. բոլոր, բոլոր նրա ցանկութիւնները, տենչանքը ուղղւած են միայն մի կէտի՝ փող հաւաքել, հարկաւոր գումարը դրստել, որպէսզի մի երկու սօմար հող էլ կարողանայ գնել ու իր հողի կտորը «կլորիկացնել»։ Նա իրեն զոր է տալիս, մէջք է կոտրում ծանր, ուժից վեր աշխատութիւնների մէջ, զրկում է իրեն կեանքի ամենատարրական պահանջներից, խեղդում է իր մէջ ամենախոր զգացումները՝ մանկական և ծնողական ջերմ կապը, ամուսնական սէրը, ընկերական մտերմութիւնը. նա պատրաստ է քաղցամահ անել իր հօրն ու մօրը, վանդել տանից իր հարազատ զաւակներին։ Եւ նրա մտքի ու հոգու բոլոր ոյժերը կենտրօնացած են մի կէտի վրայ, այն է՝ հողի։ Նրա այդ սէրը դէպի հողը, որ հիւանդկոտ, ժոլի կրքի է փոխւում, խեղդում, մեռցնում է նրա մէջ բոլոր այլ զգացումները—և՛ քաղաքացիական, և՛ մարդկային։

Ահա ընդհանուր գծերով ֆրանսիական գիւղացու տիպը, ինչպէս նրան պատկերացնում է ֆրանսիական գեղարւեստական գրողների մեծամասնութիւնը, այդ թւում և Զօլան իր «Հող» անունով վէպի մէջ։

Սակայն իսկապէ՞ս այդպէս է ֆրանսիական գիւղացին, որն իր անխոնջ ուսերի վրայ կրել և դեռ կրում է ֆրանսիական ամբողջ մրրկալի պատմութիւնը՝ բարձր կուլտուրով և փայլուն քաղաքակրթութեամբ հանդերձ, այն գիւղացին, որ տւել է և տալիս է իր միջից ամենահռչակաւոր ներկայացուցիչներ գրական, գիտական և հասարակական կեանքի ասպարէզում, սկսած Պրուդօնից մինչև Պաստեօրը, Գամբէտտայից մինչև Կլէմանսօն։

Կասկածից դուրս է, որ ժամանակակից գիւղացիութիւնը բնորոշելիս, մռայլ գծերը խիստ չափազանցրած են, սև գոյները չափազանց սառն ու կոպիտ են քսած։ Եւ այդ հանգամանքը հետևանք է գլխաւորապէս այն բանի, որ գիւղացիական կեանքի մասին գրել են այնպիսի մարդիկ, որոնք միանգամայն օտար են գիւղին, և որ Ֆրանսիան մինչև օրս չի ունեցել ոչ մի հատիկ իսկական-ժողովրդական—(այդ խօսքի ռուսական նշանակութեամբ) գրող։ Ֆրանսիան ունեցել է իր Ժորժ-Զանդը և Միշլէն, Մոպասանը և Զօլան, բայց նա չէ ունեցել մի հատ Ուսպէնսկի, մի հեղինակ, որը սրտի խորունկ զգացումով, ջերմ սիրով գիւղը գնար, որը ներս թափանցէր ժողովրդական կեանքի նուիրա-

կան և խորհրդաւոր անկիւնները՝ նրա միտքը, նրա ուղղութիւնը հասկանալու, այն գիտակցութեամբ, որ ինքն անվերջ, յաւիտեանս պարտական է այդ ժողովրդին։

Ֆրանսիայում գիւղացիութեան մասին գրում էին, գլխաւորապէս, «պիկանտ թեմաներ» որոնողները, գրում էին «օտարներն օտարների համար, իսկ յաճախ՝ ժողովրդի թշնամիները նրա թշնամիների համար»։ Ահա այդ է պատճառը, որ գոյները դուրս էին գալիս այնքան սառն ու մռայլ, այնքան կոպիտ ու ժակերեսային։

Այդ հեղինակներից գրեթէ և ոչ մէկը կանգ չէ առել խորը ուշադրութեամբ այն խնդրի վրայ, թէ ինչու է խակապէս գիւղացին այդօրինակ պահպանողական, կասկածոտ ու բարասիրտ. ինչու նրա բոլորը զգացումներն ու մտածմունքը կենտրոնացած են իր սեփականութեան, իր մի կտոր հողի վրայ։ Մինչդեռ արժէր լուրջ կերպով կանգ առնել այդ հարցերի վրայ...

Եթէ ֆրանսիական գիւղացու բնաւորութեան մի քանի իրական գծերը համապատասխանում էլ են գրականական այդ նկարագիրներին, այնուամենայնիւ այդ գծերը ոչ մի դէպքում չեն կարող ընորոշ համարուել ֆրանսիական գիւղացիութեան վերաբերմամբ, որովհետև այդ մռայլ գծերը զարգացել և առաջ են եկել ոչ թէ երկրագործական աշխատանքի շնորհիւ, այլ կուլտուրական դասակարգերի վերաբերմունքից դէպի ժողովուրդը։ Եթէ գիւղացին կասկածոտ է և պահպանողական, պատճառն այն է, որ կուլտուրական դասակարգերը նրան հաւատ ու վստահութիւն չեն ներշնչել դէպ՝ իրենց,—և չէին էլ կարող ներշնչել,—զրանից զատ, այդ կրթուած դասակարգերը գիւղացուն չեն տուել իր հոգեկան ոյժերը զարգացնելու, իր մտաւոր հորիզոնը ընդլայնելու համար անհրաժեշտ ոչ միջոցներ և ոչ էլ հնարաւորութիւն։ Եթէ գիւղացին իր բոլոր մտքերն ու ոյժերը կենտրոնացրել է իր հողի վրայ՝ այն նպատակով, որ չը կարուի այդ հողից և ունենայ այդ հողն այնպիսի քանակութեամբ, որ կարողանայ իր գոյութիւնը պահպանել, պարզ է, որ այդ բանը թելադրում է նրան միայն և միմիայն ինքնապահպանութեան ընազդը։ Իր սեփական հողի մի կտորի և միայն նրա մէջն էր տեսնում գիւղացին իր միակ և հուսատարիմ պաշտպանին, որը չի խաբի, չի դաւաճանի և չի թողնի նրան, այդ միայնակ ու անօգնական մարդուն, երես առ երես քաղցամահի դաժան ուրուականի հանդէպ։

Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը չարդարացրեց գիւղացիների յոյսերը, հող չը տուեց հողագործին,—և ֆրանսիական գիւղացիութիւնն ինքն իր սեփական ոյժերով յանձն առաւ իրագործելու այդ վիթխարի խնդիրը։ Ուժից վեր աշխատանքի և անասելի ջանքերի գնով նա սկսեց քայլ առ քայլ գնել կալուածատիրական հողերը, սկսեց գլուխ բերել այն գործը, որին ֆրանսիական բոլոր հեղինակները «Հողի նուաճումը գիւղացիների ձեռքով» անունը տուին։ Եւ գիւղացիութիւնը թերևս կարողանար հասնել իր նպատակին, եթէ միայն նրա դէմ դուրս չը գային նոր թշնամիներ, եթէ նա ստիպուած չը լինէր կռիւ մղել պահպանելու համար և այն սեփականութիւնը, որն ունէր. եթէ նա ստիպուած չը լինէր յարմարուել կապիտալիզմի ստեղծած կեանքի նոր դժուարին ու բարդ ձևերին։ Եւ մեղաւորը բոլորովին գիւղացին չէ, եթէ այդ համարեա անիրագործելի խնդիրները պահանջեցին նրա բոլոր ոյժերի, մտաւոր ու ֆիզիքական ընդունակութիւնների լարումը։

Ֆրանսիական ինտէլլիգենցիան, մինչև իսկ նրա ամենաազնիւ մասը, որ ամենայն անկեղծութեամբ հոգում էր ժողովրդական բարօրութեան մասին, բաւականաչափ ուշադիր չէ եղել և չի խորհել ֆրանսիական գիւղացու հոգեբանութեան, նպատակների և ձգտումների մասին։

Հողի և անկախութեան համար լարուած կռիւի մէջ, փոխանակ գիւղացուն օգնութեան հասնելու, ինտէլլիգենցիան, սարսափելով յեսմնացութիւնից, անհատականութիւնից, յայտարարեց նրան յենարան հակայեղափոխութեան և այն ամենի, ինչ ձգտում է յետ, դէպի խաւարը, և այդպէս լռութեան տալով իր պարտականութիւնները, նա, այդ ինտէլլիգենցիան, ինքն իրեն մխիթարում էր միայն նրանով, որ միևնոյն է, սեփականատէր-գիւղացին մօտ ապագայում պէտք է անհետանայ, և որ նրա տեղը պիտի բռնէ աւելի քիչ կամակոր ու հողազուրկ գիւղական մշակը—բատրակը։

Եւ միայն ամենավերջին ժամանակները սոցիալիստական ինտէլլիգենցիան ըմբռնեց այդ հայեացքի ամբողջ սխալը, դէպի գիւղացիութիւնն ունեցած այդ տեսակ վերաբերմունքի կորստաբեր լինելը և ընդունեց բոլորովին այլ տակտիկա։

V

Ֆրանսիական գիւղացին սիստեմատիկ կերպով ձգտում էր հասնել «հողի նաւաճմանը» խիստ լարուած աշխատանքի և բազմաթիւ զրկանքների միջոցով։ Բայց դրա հետ միասին նա միշտ ստիպուած էր լինում կռիւ մղելու աննպաստ պայմանների հետ, որոնք սպառնում էին զրկել նրան նաև այն սեփականութիւնից, որը նա արդէն ունէր։ Այդ աննպաստ պայմաններից մէկն էլ այն էր, որ հողը հօրից որդոց ձեռքն անցնելիս՝ սիստեմատիկաբար մանրանում, փաժան-բաժան էր լինում։ Գիւղացիութեան հողաբաժինների այդ բնական և անխուսափելի մանրացումը առաջ էր բերում աղքատացում, իսկ ապա նաև գիւղացիութեան հողազրկութիւն։ Այդ չարիքի դէմ կռուելու համար գիւղացին էլ ոչ մի ուրիշ միջոց չը գտաւ, բայց եթէ գործադրել իր վերաբերմամբ Մալտուսի սարսափելի խորհուրդը։ Իսկապէս էլ ինչ էր մնում անելու։ Հողաբաժինը, ժառանգաբար հօրից որդիներին անցնելիս միայն այն դէպքումն է բաժան-բաժան լինում, երբ հայրական հողը հարկաւոր է լինում բաժանել մի քանի ժառանգների միջև։ Իսկ երբ ժառանգը միայն մէկն է, այն ժամանակ հողը անցնում է նրան ամբողջաբար։ Եւ այդ պատճառով գիւղացին վճռում է մէկից աւելի որդի չունենալ...

Միւս, առաւել ևս կարևոր, գիւղացիական բարօրութիւնը հիմնայատակ անող և գիւղացուն հողազուրկ դարձնող պայմանն էլ՝ գիւղի ազգաբնակութեան չափազանց աւելանալն է, այսինքն՝ երբ երկրագործ ժողովրդի թիւը աւելի է դառնում, քան այդ հարկաւոր է եղած հողի մշակման համար։ Գիւղական ազգաբնակութեան այդ յաւելումը, որը ոչ սեփական հող ունի, ոչ էլ կապալով վերցնելու հող կամ վարձու աշխատանք, այդ յաւելումը, կրկնում ենք, ծանրանում է որպէս մի ճնշող լուծ աշխատաւոր ժողովրդի վզին, բարձրացնում է հողի կապալավարձը և, որ ամենից գլխաւորն է, իջեցնում է վարձու բանուորների աշխատավարձը։

Հողազուրկ, գործ որոնող գիւղացիների յաւելումը և դրանից անմիջապէս ծագող աշխատավարձի անկումը առաջ բերեց մի քանի եւրոպական երկիրներում, ինչպէս օրինակ Անգլիայում և Պրուսսիայում, այն հանգամանքը, որ խոշոր կալուածատէրերի հո-

զատիրութիւնը կարողացաւ միանգամից կապիտալիստական բնաւորութիւն ընդունել, այսինքն խոշոր հողատեղերում հողն սկսեցին մշակել վարձու աշխատանքով, մեքենաների օգնութեամբ և մեծ կապիտալների միջնորդութեամբ։

Այդ երևոյթն ունեցաւ այն հետևանքը, որ երկրագործական արտադրութիւնը խիստ կերպով էժանացաւ և գիւղացի-սեփականատէրերը աղքատութեան դուռն ընկած, հարկադրուեցին ծախել իրենց հողերը։

Այդ կողմից Ֆրանսիական գիւղացին համեմատաբար աւելի լաւ պայմանների մէջ է գտնուում։ Մեծ Յեղափոխութիւնը հողազուրկ չարեց ազատագրուած գիւղացիներին, փողոց չը նետեց միլլիոնաւոր հողազուրկ բանուորների, որոնք ծախէին չնչին գընով իրենց աշխատանքը և դրանով թոյլ տային խոշոր հողատէրերին անցնել արտադրութեան կապիտալիստական ձևին։ Ֆրանսիական խոշոր հողատիրութիւնը, չը գտնելով այդ քաղցած ու հողազուրկ բանուորների պատրաստ բանակը, չանցաւ արտադրութեան կապիտալիստական ձևերին, այլ պահեց հողը մշակելու հին եղանակները, այսինքն շարունակեց հողը կապալով տալ ֆերմերներին և կիսարարականներին։ Եւ ամբողջ XIX դարի ընթացքում գիւղացիութիւնը ամեն կերպ աշխատում էր գիւղը պաշտպանել ազգաբնակութեան չափազանց շատանալուց և գիւղական ժողովրդի ամբողջ յաւելումը, հարիւր հազարաւոր ժարդիկ, ամեն տարի ուղարկում էր զանազան քաղաքներ՝ գործարաններում աշխատելու։ Եւ այդ էր պատճառը, որ մինչև անցեալ դարի ընթացքում քաղաքների բնակչութեան թիւը աւելացաւ համարեա վեց անգամ (2 $^1/_2$ միլլիոնից հասաւ 14 $^1/_2$ միլլիոնի), գիւղի ազգաբնակութեան քանակութիւնը մնաց նոյնը, ինչ որ XVIII դարի վերջերին էր, այսինքն 24 միլլիոն։

Խոշոր հողատէրերը, որոնք ոչ միայն չէին գտնում աւելորդ բանուոր ձեռքեր, այլ նոյնիսկ չէին կարողանում այնքան բանուոր ճարել, որքան իրենց պէտք էր, դառնապէս գանգատւում էին և դեռ չեն դադարում գանգատւել այն մասին, որ գիւղացիները գիւղից «փախուստ» են տալիս, և այդ վերջին հանգամանքը նրանք (խոշոր հողատէրերը) համարում են գիւղի անբարոյականացման ապացոյց, համարում են այդ մի փաստ, որը ցոյց է տալիս գիւղացիների ատելութիւնն ու զզուանքը դէպի երկրագոր-

ծութիւնը, նրանց ձգտումը դէպի քաղաքների հեշտ ու ապահով կեանքն ու կտոր հացը։ Մինչդեռ հէնց այդ «փախուստովն» է, որ մանր գիւղացիութիւնը պահում էր իր գլուխը և փրկում իրեն քայքայումից։ Այն հանգամանքը, որ գիւղացիութիւնը թոյլ չէր տալիս, որ գիւղում առաջ գար հողազուրկ ազգաբնակութեան յաւելում, նախ և առաջ ինքնին մեծ արքելք էր, որը չէր թողնում, որ կալուածատիրական տնտեսութիւնը խոշոր-կապիտալիստական դառնայ. երկրորդ՝ շնորհիւ այդ հանգամանքի, գիւղացիները կարողացան հասնել այն նպատակին, որ հողի կապալավարձը և արժէքը ոչ միայն չը բարձրացան, այլ նոյն իսկ իջան։ [1]) Իսկ դրա հետ զուգընթաց՝ երկրագործական վարձու բանւորների աշխատավարձը սիստէմատիկ կերպով բարձրանում էր։ [2])

Եթէ շնորհիւ մի քանի բարեպատեհ պայմանների, եթէ շնորհիւ հէնց իր գիւղացիութեան անյաղթելի տոկունութեան, աշխատասիրութեան և անձնուիրութեան՝ կապիտալիզմին չկարողացաց լայն չափերով երկրագործութեան մէջ թափանցելու, այդ դեռ բնաւ չէ նշանակում, որ գիւղացիութիւնը այդպիսով փրկուեց կապիտալիզմի անուղղակի ազդեցութիւնից։ Ճիշտ է, գիւղացիական հողատիրութեան հետ միասին, կողք-կողքի ուած, հանդէս չեկաւ խոշոր—կապիտալիստական տնտեսութիւնը՝ իր կատարելագործուած տեխնիկայով, իր ժամն աշխատանքով, որոնք իջեցնէին երկրագործական արտադրութեան արդիւնքների գները, արժէքը՝ ու սակայն այդ չը խանգարեց կապիտալիզմին՝ այդ գներն ու արժէքները կողմնակի կերպով իջեցնել նրանով, որ ժամն հացը սկսեց ներմուծուել հեռաւոր երկիրներից, և շնորհիւ դրան էլ հացի գները սկսեցին սիստէմատիկաբար ընկնել ու ընկնել։

Գիւղացիները ամեն ջանք էին գործ դնում հողի արդիւնաբերականութիւնը բարձրացնելու համար և այդ կողմից նրանք ահագին հետևանքների հասան։ Փոխանակ միջին բերքի՝ մէկին-վեց, որպիսին արտադրում էր հողը XVIII դարի վերջում, այժմ այդ նոյն հողը տալիս է բերք համարեա մէկին-տասնուվեց։ Սակայն հացի գների ինջնեկն այնքան սաստիկ էր, որ բերքն աւելանալով, եկամուտը չէր աւելանում։ Մինչդեռ այս վերջին 30-40 տարիների ընթացքում ազգաբնակութեան պահանջները խիստ աճել են։

Այդպիսով գիւղացիութեան առջև, իսկապէս, կանգնած էր դժուարին ու ծանր մի խնդիր, որն այլևս անկարելի էր լուծել հին միջոցներով՝ աշխատանքով ու մէջք ծռելով։ Գիւղացին ստիպուած էր փրկութիւն որոնել ոչ թէ իր մէջ, այլ դրսև, իր շուրջը. նա ստիպուած էր փոքր ինչ դուրս գալ իր կեղևից, իր միայնութեան շրջանակից, հրաժարուել իր հայեացքների մի քանիսից, փոխել իր կեանքի ամբողջ կազմը։ Եւ գիւղացին կանգ չ'առաւ այդ բանի առջև։

Արդիւնաբերական և գործարանական կապիտալիզմը, որ այդ տեսակ յեղաշրջում մտցրեց գիւղացիական կեանքի ու տնտեսութեան մէջ, ունեցաւ նաև իր լաւ ազդեցութիւնը գիւղական ժողովրդի վրայ։ Բացի այն հանգամանքից, որ կապիտալիզմը գործարանական արդիւնաբերութեան զարգացմամբ զրաղմունք տուեց այն միլիոնաւոր մարդկանց, որոնց գիւղն ուղարկում էր քաղաք, —դրանից զատ նա (կապիտալիզմը) արթնացրեց գիւղացիութեան մէջ նոր ձգտումներ, հանեց նրան իր փակուած կեանքի նեղ շրջանակից և ընդլայնեց նրա մտաւոր հորիզոնը։

Վերը յիշուած ճառի մէջ Ժորէսը զարմանալի պարզ և գեղարուեստօրէն նկարում է կապիտալիզմի գիւղացիութեան վրայ ունեցած այդ ազդեցութեան պատկերը։

«Մարդկութեան պատմութեան մէջ,—ասում էր նա,—ոչինչ, ոչ մի բան դուրս չէ կորչում, և ես չեմ կարծում, թէ տանջանքի երկար տարիները ֆրանսիական գիւղացիութեան համար կորած տարիներ լինեն։ Այո, օգտակար,—ես չեմ վախենում այդ խոստովանել ամբիոնից,—օգտակար է, երբ գիւղացիները իրենց հողերի մանր կտորների վրայ տանջուել ու տանջւում են հեռաւոր ու հաստատուած տնտեսական երևոյթների ազդեցութիւնից։ Զափազանց երկար և շատ փակուած մնաց գիւղացին իր անհատականութեան

---

[1]) Ահա 1882 և 1892 թուականների միջև եղած հողի կապալավարձի և ծախու արժէքի տարբերութիւնը.

Տարիք	Կապալավարձը	Միջին տեսակի հողի հեկտարի արժէքը
1882	62 ֆրանկ	1, 863 ֆր.
1892	54 »	1, 559 »

[2]) Տարով վարձուած գիւղական բանւորներն ստանում էին 1862 թ. 256 ֆր.—տարեկան։ 1892 թ.—360 ֆրանկ։ Աւելանում էր նոյնպէս հովիների և կառավարիչ—ծառաների վարձը։

մէջ։ Նա գիտէր միայն իր փոքրիկ հողաբաժինը, սիրում էր այն անհաւատալի և կատաղի սիրով—և էլ ուրիշ ոչինչ։ Ի՞նչ գործ ունէր նա մեացած աշխարհի հետ։ Նրան ի՞նչ, թէ նրա այդ փոքրիկ և խանդկոտ եռանդով պահպանուող հողաբաժնի միւս կողմը ընութեան բնական ոյժերն են, որ ազատ ծաւալւում են տարածութեան հետ ունեցած մեծ յարաբերութեան մէջ։ Եւ միմիայն իրեն, իր հողի փշուրին էր յարմարցնում գիւղացին և՝ արեգակի, և՝ հողմերի, և՝ ամպերի շարժումները, երևոյթների ամբողջ կարգն ու քաօսը։ Ամբողջ հօրիզոնից նրա աչքով ընկնում էր լոկ այն նեղ և աննշան ճեղքուածքը, որի միջով նրան կարող էր հասնել բարերար կամ կործանիչ ազդեցութիւնը...

«Բայց ահա նրա ցորենի արտի վրայով սկսում է անցնել արդէն ոչ թէ բնութեան բնական ոյժերի հոսանքը, այլ տնտեսական, սոցիալական և մարդկային ոյժերի շունչը։ Նա վարում է, ցանում ու հնձում, նա տանում է իր ցորենը մօտակայ շուկան։ Բայց դուրս է գալիս, որ թէպէտ և նրա աշխատանքը տարեցտարի մեում է նոյնը, բայց նրա ցորենի, անասունների, գինու, ձիթենիի և կաթի գինը սիստէմատիկաբար իջնում է։ Այդ երևոյթների հանդէպ գիւղացին արդէն այնքան անտարտունջ չէ խոնարհւում, ինչպէս տարրական երևոյթների՝ կարկուտի, մրրկի, երաշտի և ցրտաստարութեան հանդէպ։ Նա, թէպէտ և մութ կերպով, այնուամենայնիւ գիտակցում է, որ գների այդ փոփոխութիւնը մի փաստ է սոցիալական ընաւորութեամբ, մարդկային ձեռքի մի գործ է, որը կարելի է փոխել։ Եւ ամեն կողմից պետական մարդիկ, ֆինանսիստները, տնտեսագէտները, պատգամաւորները, կանդիդատները պնդում, կրկնում են, որ վերջին կէս դարի ընթացքում ահագին փոփոխութիւններ են տեղի ունեցել ամբողջ երկրագնդի վրայ, որ Հնդկաստանի, հարաւային Ռուսաստանի և արևմտեան Ամերիկայի հսկայական հարթավայրերի վրայ ուրիշ մարդիկ էլ աշխատում են հէնց այնպէս, ինչպէս ինքը, բայց աւելի քիչ ծախքերով, և որ հեռաւոր երկիրների այդ ամբողջ արտադրութիւնը շնորհիւ մեծ նաւերի արագընթացութեան, մէկէն ի մէկ տեղափոխւեց այստեղ և իր ամբողջ ծանրութեամբ ընկաւ նրա, գիւղացու վրայ։ Եւ այդպէս՝ ցորենի այն քանակութիւնից, որ ցանել է ֆերմէրը արևմտեան Ամերիկայում, ոսկու և արծաթի այն չափից, որ դուրս է բերում հարաւային Աֆրիկայի և Աւստրա-

լիայի հանքերում, Հնդկաստանի օրով աշխատող մուրացկան բանուորի աշխատավարձից, այլ և այլ երկիրներում սահմանուած հարկերի և տուրքերի քանակից,—այդ բոլորից վաղը կախուած կը լինի ոչ միայն նրա ցորենի, նրա աշխատանքի գինը, այլ հէնց նրա ազատութիւնը,—նրա սեփականութիւնը։

«Եւ ահա գիւղացու համար մառախուղի միջից երևան են գալիս հեռաւոր երկիրներ ու ժողովուրդներ, բայց այս անգամ արդէն ոչ իբրև դպրոցական աշխարհագրութեան մութ և անկենդան ուրուականներ, այլ որպէս անողոք իրականութիւն։ Եւ միևնոյն ժամանակ նա առաջին անգամ սկսում է զգալ ամբողջ մարդկութեան սոսկալի համերաշխութիւնը։ Նա, որին կեանքը, անկրթութիւնը, ագահութիւնն ու եսականութիւնը մեկուսացրել են իր մի կտոր հողի վրայ, սկսում է իր կեանքը կապուած զգալ միւս մարդկանց կեանքերի հետ։ Նա տեսնել է սկսում, որ իր արտի հասկերը սոսափում ու կորանում են ոչ թէ մթնոլորտային, այլ սոցիալական շնչերից ու հոսանքներից։ Եւ նա, զարմացած, ականջ է դնում ու խորհում։ Առաջին անգամն է, որ այդ կղզիացած եսապաշտը, շնորհիւ ճգնաժամի երկար տանջանքներին, կենդանի յարաբերութեան մէջ է մտնում մարդկային ամբողջ ցեղի հետ։

«Սակայն կրիզիսը (ճգնաժամը) ունեցել է նաև այլ օգտակար ազդեցութիւն գիւղացիութեան վրայ։ Հանդիպելով համաշխարհային մրցման այդ ահաւոր յորձանքին երես առ երես, ընդհարուելով մարդկային ձեռքի արտադրութեան այդ անսահման հեղեղատի հետ, գիւղացին ըմբռնեց իր միայնութեան ամբողջ վըտանգը։ Եւ նա սկսեց որոնել, սկզբում դեռ խարխափելով, այն ձևը, թէ ինչպէս կազմակերպել և խմբել իր ջանքերը, ինչպէս կապակցել, զուգաւորել իր եռանդը, որ կարողանայ փրկւել։ Նա սկսում է պարզապէս հասկանալ, որ ինքնապահպանութեան համար բաւական չէ արդէն մենակ իր «հողային սեփականատէր» կոչումը,—և նա սկսում է իր յենակէտը, փրկւելու միջոցը որոնել իրեն շրջապատող համայնքի մէջ։

Եւ այդպիսով ճգնաժամերի տևողական ազդեցութիւնը հետզհետէ նախապատրաստեց գիւղացուն մտքերի և, զուցէ, կեանքի նոր կազմի համար»։

VI

Ֆրանսիական գիւղացիութիւնը բնորոշելիս, ով էլ որ լինի այդ անողը՝ ֆրանսիացի, թէ այլազգի, սովորաբար ամենից առաջ և ամենից ուժեղ կերպով շեշտւում է գիւղացու անհատականութիւնը, նրա սէրը դէպի մասնաւոր սեփականութիւնը, նրա զգւանքը դէպի հասարակական և համայնական ձեռնարկութիւնները։ Բացի այդ, այստեղ ևս, ինչպէս և գիւղացիութեան այդ յատկանիշները նկարագրելիս, աչքաթող են անում ոչ միայն ուրիշ դասակարգերի ազդեցութիւնը գիւղացու վրայ, այլև այնպիսի փաստեր, որոնք բացէ ի բաց հակասում են այդ բնորոշումներին։ Այդ բանի համար որպէս ամենալաւ իլլիւստրացիա կարող է ծառայել ֆրանսիական գիւղացիութեան վերաբերմունքը դէպի հաժայնական հողատիրութիւնը։ Զանազան բնորոշումներին նայած, կարելի էր կարծել, թէ ֆրանսիական գիւղացիութիւնն ինքը արդէն վաղուց ի վեր աշխատում է անջատել հողատիրութեան այդ ձևից և վաղուց է, ինչ ձեռք է քաշել նրանից, մինչդեռ փաստերը վկայում են, որ տիրող դասակարգերն են, որ Ֆրանսիայում համայնքը շարունակ բռնի կերպով քայքայել են. և չը նայած, որ ամբողջ դարերի ընթացքում սիստեմատիկ ու եռանդուն կերպով համայնքը արմատախիլ անելիս է եղել, բայց և այնպէս նա մինչև այժմ էլ ոչ միայն չէ անհետացել, այլ և կազմում է Ֆրանսիայի ամբողջ երկրագործական հողատարածութեան ինը տոկոսը։

«Համայնական սեփականութիւնը,—ասում է Ն. Կուդրինը ֆրանսիական գիւղացիութեան խնդրի շուրջը գրած իր յօդուածներից մէկում,[1])—Ֆրանսիայում ապրել է մի ամբողջ շարք յարձակումներ. հողերի գրաւումը ֆէօդալների ձեռքով և նրանց անարդար պահանջումները XVI և XVII դարերի ընթացքում. գիւղատնտեսական բուրժուական դաղափարների հեղեղը XVIII դարում. Կոնվէնտի 1793 թուականի այն օրէնքը, որ վերաբերում էր համայնական հողերի պարտադիր բաժանման բոլոր բնակիչների միջև՝ եթէ այդ ցանկանայ ազգաբնակութեան երրորդ մասը. 1813 թուականի օրէնքը, որով Նապոլէօնը համայնական սեփականութեան մի մասը գրաւեց յօդուտ պատերազմից սպառուած գանձարանի և պետական փոխառութեան պատրուակով. 1860 թուակա-

[1]) «Крестьянскій вопросъ во Франціи», «Русское Богатство» 1900, № 1.

նի օրէնքը, որը պարտաւորեցնում էր համայնքներին այսպէս թէ այնպէս շահագործել անմշակ մնացած հողերը և այլն։ Եւ ինչ. չը նայած որ համայնական սեփականութիւն, անդադար կտրուել, անդամալուծուել և քայքայուել է այժմ թէ խորամանկութեամբ, որ ամեն տեսակ օրինաւոր և ապօրինի փորձերի առարկայ է եղել, բայց և այնպէս նրա տարածութիւնը ներկայումս կազմում է ամբողջ տէրրիտորիայի մօտ տասնումէկերորդ մասը, և գոնէ վերջին 15 տարիների ընթացքում ցոյց չէ տալիս պակասելու ոչ մի նշան։ Եւ նշանակալից է այն, որ սոցիալական խնդրի չափազանց սուր կերպարանք ստանալը առաջ է բերում նոյնիսկ բուրժուաների շրջաններում քննադատական վերաբերմունք դէպի այն վարդապետութիւնները, որոնք պնդում են հողի մասնաւոր սեփականութեան բացառիկ օգտակարութեան վրայ. և այժմ նոյնիսկ բուրժուաները հարկադրուած են զգում իրենց՝ զննել համայնական տիրապետութեան խնդիրն աւելի լայն տեսակէտից, քան առհասարակ անում է այդ դասակարգերի մէջ»։

Դրա հետ միասին սոցիալիստական կուսակցութիւնն էլ է սկսում ճանաչել համայնքը, որպէս հողային յարաբերութիւնների վերանորոգման ամենալաւ գործիքներից մէկը, ուստի որոշել է ոչ միայն ձգտել պահպանել գոյութիւն ունեցող համայնքները, այլ և, եթէ հնարաւոր լինի, նորերն էլ ստեղծել։

Սակայն, կապիտալիզմի ազդեցութեան դէմ կռուելու համար գիւղացին հնարաւոր չը համարեց վերադառնալ համայնական հողատիրութեան։ Նա գտաւ մի այլ, աւելի հասարակ ձև՝ նոյն հասարակական համերաշխութիւնը և փոխադարձ օգնութիւնը իրագործելու, որը թոյլ է տուել նրան պահպանել իր մասնաւոր սեփականութիւնը և միևնոյն ժամանակ տուել է նրա ձեռքը անհրաժեշտ միջոցներ՝ աւելի բարձր կուլտուր մտցնելու, անբարենպատեհ պայմանների հետ կռուելու, օրէնսդրութեան վրայ ազդելու համար և այլն։

Այդ ձևը—երկրագործական միութիւններն են (սինդիկատները)։

Երկրագործական սինդիկատները սկսեցին առաջ գալ Ֆրանսիայում միմիայն 17 տարի սրանից առաջ, բայց չը նայած դրան, նրանք արդէն ընդգրկել են երկրագործ ազգաբնակութեան մի անագին մասը և խոստանում են դեռ աւելի աճել ու զար-

գանալ։ Առաջին սինդիկատները Երևան եկան 1848 թուականին այն բանից յետոյ, երբ պատգամաւորների խորհրդարանը ընդունեց մի օրէնք, որը «թոյլատրում էր կազմակերպել արհեստակցական սինդիկատներ, որոնց միակ նպատակն է ուսումնասիրել և պաշտպանել արդիւնաբերական առևտրական և երկրագործական շահերը» (1883 թուականի մարտի 21-ի օրէնքը)։

Սինդիկատների առաջին քարոզողները եղան գիւղատնտեսները,—և գիւղացիութիւնը ջերմ համակրանքով ընդունեց այդ նորմուծութիւնը։ Այդ հաստատւում էր նրանով, որ սինդիկատները սկսեցին Երևան գալ Ֆրանսիայի բոլոր մասերում, և նրանց թիւը տարէցտարի աճում էր զարմանալի արագութեամբ։ 1884 թուականին հիմնուել է ընդամենը 5 սինդիկատ, իսկ վեց տարի յետոյ՝ 1890 թուականին արդէն 648 սինդիկատ կար, որոնք ունէին 234,234 անդամ։ Մինչև 1899 թուականի սկիզբը սինդիկատների թիւը եռապատկուեց (1824 սինդիկատ), իսկ անդամների թիւը հասաւ համարեա կէս միլլիոնի (491692)։ Նոյն 1898 թի վերջին արդէն 2,133 սինդիկատ կար։

Սինդիկատները դնում են իրենց առաջ շատ լայն նպատակներ, որոնք ընդգրկում են գիւղացիական կեանքի ոչ միայն տնտեսական, այլ և սոցիալական, քաղաքական և բարոյական կողմերը։ Սրանց ընդհանուր նպատակն է «երկրագործութեան տնտեսական շահերի ուսումնասիրութիւնը և պաշտպանութիւնը», իսկ այդ նպատակը արտայայտւում է հետևեալ մասնաւոր ձգտումներով. 1) ծանօթանալ որոշ տեղի երկրագործութեան կարիքների հետ և առաջարկել կառավարութեանը զանազան միջոցների նախագծեր՝ այդ կարիքները վերացնելու համար, պաշտպանել այդ միջոցների անհրաժեշտութիւնը պատգամաւորների պալատում։

2) Տարածել երկրագործական գիտելիք—ինչպէս յատուկ դասընթացքների, դասախօսութիւնների, բրոշիւրների, գրադարանների միջոցով, այնպէս էլ ամեն տեսակ այլ եղանակներով։

3) Խրախուսել ամեն մի նոր փորձ օգտակար բոյսեր տնկելու, հողը պարարտացնելու, կատարելագործուած մեքենաներ և գործիքներ մտցնելու, մի խօսքով այն ամենի, ինչ կարող է նպաստել աշխատանքը հեշտացնելուն, ծախքերը պակասեցնելուն և արտադրութիւնը բարձրացնելուն։

4) Առաջ բերել, և խրախուսել և ամենուրեք տարածել այնպիսի հիմնարկութիւններ, ինչպէս միատեղ արտադրութեան և վաճառման ընկերութիւնները, փոխադարձ օգնութեան կասսաները կենսաթոշակային դրամարկղները, դժբախտ դէպքերից ապահովող ընկերութիւնները, արդիւնքների առաջադրութեան ու պահանջի մասին տեղեկութիւններ տուող գրասենեակներ և այլն։

5) Միջնորդել երկրագործական արդիւնքները վաճառելու, պարարտացնող միջոցներ, գործիքներ, անասուններ և այլ հարկաւոր պարագաներ գնելու համար, այն պայմանով, որ սինդիկատի անդամները օգտուեն զիջումով։

6) Հետևել, որ սինդիկատի անդամների ձեռքով գնուող կամ ծախուող արդիւնքները կեղծած չը լինեն։

7) Տալ ձրի խորհուրդներ սինդիկատի անդամներին երկրագործութեանը վերաբերող բոլոր խնդիրների մասին,

8) Հիմնել անդամների միջև այլ և այլ ընկերութիւններ՝ փոխադարձ օգնութեան, ապահովագրութեան և առհասարակ այնպիսի հիմնարկութիւններ, որոնք նպաստ էին սինդիկատի անդամների ամենկողմանի զարգացմանը և նրանց բարօրութեան բարձրացմանը։

Եւ պէտք է ասել, որ այդ նախագծերը չը մնացին միայն թղթի վրայ։ Այդ 12-15 տարիների ընթացքում սինդիկատները շատ են նպաստել ֆրանսիական երկրագործութեան բարձրացմանը։

Ներկայումս սինդիկատները խառն բնաւորութիւն են կրում. նրանց անդամների թւում կան և խոշոր, և միջակ, և մանր հողատէրեր, և ֆերմէրներ, և կիսարաականներ։ Սինդիկատների մէջ կարող են մտնել նաև բանուորներ, բայց դրանք համարեա ոչ մի տեղ չեն մասնակցում սինդիկատներին։ Սինդիկատների այդպիսի բնաւորութիւնը և այն հանգամանքը, որ նրանց կազմակերպիչները լինում են խոշոր հողատէրերը, արիստոկրատները, կոմսերը և բարոնները, իր առաձնայատուկ կնիքն են դնում նրանց ամբողջ գործունէութեան վրայ, խիստ սահմանափակելով նրանց նշանակութիւնը գիւղացիութեան համար։ Նրանք, այդ սինդիկատները, բոլորովին անկարող են օգնել գիւղացիութեանը «հող նուաճելու» գործում, հնարաւորութիւն չունեն կանոնաւոր յարաբերութիւններ ստեղծել ոչ խոշոր և մանր հողատիրութիւնների, ոչ

Էլ հողի սեփականատէրերի և բանուորների միջև։ Նրանք կարող են օգտակար լինել եւ լինում են միայն արտադրութիւնը բարելաւելու, աւելացնելու եւ էժանացնելու գործում, այսինքն այն շրջաններում, որտեղ խոշոր հողատէրերի շահերը ուղղակի չեն հակասում մանր հողատիրութեանը։ Խոշոր հողատիրութեան համար այդ սինդիկատները ձեռնտու են նրանով, որ դրանց միջոցով խոշոր սեփականատէրերը կարողանում են կառավարութիւնից ստանալ զանազան նպաստաւոր օրէնսդրութիւններ, մաքսեր՝ ներմուծուող հացահատիկների համար, բացի դրանից, նրանց յաջողւում է սինդիկատների միջոցով պակասեցնել տալ հարկերը և, որ գլխաւորն է, նրանք կարող են դիմել կառավարութեանը 1/2 միլիոն գիւղացիութեան անունից, իսկ այդպիսի բազմութեան ձայնին կառավարութիւնն իհարկէ չէ կ՚սրող անտարբերութեամբ վերաբերուել։ Իսկ գիւղացիների համար սինդիկատները այն ահագին օգուտն ունեն, որ նրանց միջոցով մանր հողատիրութեան մէջ աստիճանաբար մուտք է գործում, այսպէս, ասած, գիտութեան վերջին խօսքը, եւ այդպիսով մանր երկրագործութիւնը հնարաւորութիւն է ստանում ինտենսիւ դառնալ, այսինքն հասնել բարելաւման ամենաբարձր աստիճանին, առանց խոշոր կապիտալների, որոնցից գիւղացիութիւնը զուրկ է։

Այն հանգամանքը, որ ներկայումս սինդիկատները գտնւում են խոշոր հողատէրերի ղեկավարութեան ներքոյ եւ որ նրանց նշանակութիւնը գիւղացիների համար սահմանափակ է,—չի ներկայացնում մի այնպիսի կարեւորութիւն, ինչպէս այդ կարող է թւալ առաջին հայեացքից։ Այստեղ աւելի կարեւոր է այն, որ գիւղացին, վերջապէս, վճռեց դուրս գալ իր փակւած կեանքի շրջանակից, իր անհատականութիւնից, որ նա իր անտանելի դրութիւնից ազատւելու ելքը սկսեց որոնել միատեղ համայնական գործունէութեան մէջ միւս երկրագործների հետ, որ նա ըսկսեց հասկանալ այդօրինակ ընկերական, միացած և արտէլական գործունէութեան օգուտը։ Իսկ դրանից յետոյ արդէն կեանքն ինքը ցոյց կը տայ նրան, թէ ինչպէս գործել այդ զէնքով, որտեղ գործադրել իր միացած, համախմբւած ոյժերը։ Բէլգիայումն էլ այդ նոյն շարժումը թէ քաղաքում և թէ գիւղում սկսւած էր կղերականների ձեռքով, իսկ այսօր նա միանգամայն այլ բնաւորութիւն է ընդունել և անցել է սոցիալիստական կուսակցութեան ձեռքը։ Այդ նոյն բանը կարելի է ասել նաև Ֆրանսիայում։

VII

Մեր յօդւածի սկզբում մենք համեմատել էինք միմեանց հետ Ֆրանսիական գիւղացիական հողատիրութեան վիճակը XVIII դարի վերջում և նրա վիճակը ներկայ դարի նախօրեակին։

Սակայն որպէսզի ճշգրիտ գաղափար կազմւած լինի Ֆրանսիական ժամանակակից գիւղացիութեան ընդհանուր վիճակի մասին, թէ արդեօք լաւանում է թէ վատանում նրա դրութիւնը, մենք պիտի մի փոքր կանգ առնենք վերջին տասնամեակի մի քանի թւերը համեմատելու վրայ։ Տեսնենք, ինչ փոփոխութիւններ են տեղի ունեցել գիւղացիական հողատիրութեան և գիւղական աղգաբնակութեան կազմի մէջ վերջին երեսնամեակի ընթացքում, այն է՝ 1862 թւից մինչև 1892 թիւը (աւելի նոր վիճակագրական տեղեկութիւններ առ այժմ չը կան)։

Ահա այդ թւերը։

	1862 թ.	1882 թ.	1892 թ.	1862 թ. մինչև 1892 թ. Աւելացել է	Պակասել է
1) Իրենց հողերը մենակ կամ վարձու աշխատանքով մշակող սեփականատէրերի թիւը . . .	1,812,573	2,150,696	2,199,220	386,647	—
2) Ֆերմէրներ	1,035,369	968,328	1,061,401	26,032	—
3) Կիսաբարականներ . . .	405,387	341,576	344,168	—	61,219
4) Օրավարձով բանողներ	2,008,744	1,430,687	1,210,081	—	793,666
5) Ծառաներ	2,094,777	1,954,251	1,832,174	—	263,603
				412,679	1,118,445
				—	705,905

Այն, որ առաջ բերւած թւական աղիւսակը ցոյց է տալիս երկրագործական աղգաբնակութեան աւելի քան 790 հազար մարդով նւազումը, ներկայ դէպքում մեզ համար հետաքրքիր չէ, որովհետև այդ նւազումը գլխաւորապէս առաջացել է այն պատճառով, որ 70 թւականին Ֆրանսիան կորցրել է Էլզաս-Լոտարինգիան։ Մեզ համար կարեւորութիւն ունեն այն փոփոխութիւնները, որոնք տեղի են ունեցել երկրագործ ժողովրդի կազմի մէջ, և աղիւսակը վկայում է, որ այդ երեսուն տարւայ ընթացքում սեփականատէր-գիւղացիների թիւը նւազել է աւելի քան մէկ միլիոնով, իսկ կապալի խնդրում կողոպտիչ կիսաբարականութիւնը, որ նւազած է 61,000-ով, զիջել է իր տեղը կապալի մի աւելի

կանոնաւոր ձևի, այն է ֆէրմէրութեան, որը աւելացել է 26,000-ով։ Այդ թիւերը պարզ կերպով ցոյց են տալիս մեզ և այն, որ հող ունենալու ձգտումը և հողի հետ սերտ կապված լինելը ապրում է ոչ միայն սեփականատէր—գիւղացու սրտում, այլ և հողազուրկ բատրակի։

Վերը մենք արդէն յիշեցինք գիւղական բանուորների աշխատավարձի աստիճանական բարձրացումը։ Բերենք էլի մի քանի թիւեր, որոնք վկայում են ֆրանսիական գիւղի բարօրութեան աճման մասին։

Բարօրութեան աստիճանը ցոյց տալու ամենաճշգրիտ յատկանիշներից մէկն է գործածւող մսի քանակութիւնը, և այդ կողմից մենք տեսնում ենք, որ մսի գործածութիւնը գիւղական աղգաբնակութեան կողմից սիստէմատիկաբար աւելանում է։ 1862 թուականին իւրաքանչիւր գիւղական բնակչի վրայ ամբողջ տարւայ ընթացքում ընկել է 18,57 կիլոգրամ մսս (կիլոգրամը=2 1/2 ֆունտի), 1882 թուին—21,89 կիլոգր. 1892 թուին—26,25 կիլոգր. (այդ միևնոյն ժամանակ իւրաքանչիւր քաղաքային բնակչի վրայ ընկնում էր 58,12 կիլոգր)։

Այդ թիւերով մենք, ի հարկէ, մտադրութիւն չունենք ապացուցելու, որ ֆրանսիական գիւղը ներկայանում է մեզ որպէս երկրային դրախտ։

Քաւ լիցի!

Մի ամբողջ դար ֆրանսիական գիւղացիութիւնը մղել է ուժեղ և կամակոր կռիւ հողի և տնտեսական անկախութեան համար։ Եւ այդ տոկուն կռիւը, դեռ մինչև օրս էլ չի կարող վերջացած համարուել։ Միակ բանը, որ մենք փորձեցինք ապացուցել, այդ այն է, որ գիւղացիութիւնը շատ շանսեր ունի այդ կռուից յաղթող դուրս գալու և որ, յամենայն դէպս, նա չի կարող յաղթուած ճանաչուել։

Եթէ նա, այդ չարքաշ գիւղացիութիւնը, կարողացաւ դիմանալ կապիտալիզմի առաջին և ամենաուժեղ յարձակումներին, լինելով անպատրաստ, միայնակ, անկազմակերպ, ապա նշանակում է, որ այժմ, երբ նա արդէն կազմակերպւում է, երբ նրան օգնութեան ձեռք են մեկնում և՛ քաղաքական, և՛ հասարակական կուսակցութիւնները, նա, հաւանօրէն, աւելի արագ կընթանայ դէպի իր նպատակը՝ հողի և անկախութեան նուաճումը։ Եւ երբ այդ կենսական նպատակը, այդ պատմական խնդիրը իրագործուած կը լինի, միայն և միմիայն այն ժամանակ ֆրանսիական գիւղացին ուրբ կը կոխի պատմական և կուլտուրական ասպարէզը, ցոյց կը տայ, թէ ով է ինքը և ինչ է ընդունակ կատարելու։ Նրա դերը դեռ ապագայումն է։

Վ. Ե Ր Զ

ՀԱՅԿ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
1901
ՎԱՌՆԱ